նակին մէջ, կոտորածը սաստիկ էր, ամէն կողմ ահ ու սարսափ պատեց, երեք խաներն իրենց մերձակայ պարագաներով բարձրացան Ալաշկերտի հիւսիսն պատող ամենէն բարձր Զամշա կոչուած լերան վերան, որ մի ընդարձակ լեռնահովիտ ունի, ուստի կերևին Կարսայ և Բագրևանդայ վիճակներն։

Խաներ իւրեանց պարագայներով հաստատուեցան այստեղ, Յովասափ ևս պահած էին, որպէս զի իւրեանց ծառայէ, որոյ միջոցաւ շատ մի դաղանեաց հասու կը լինէին։ Կիմանային Օսմանցոց զօրութեան չափը, Հայոց նպատակը, և շատ անգամ ինչ ինչ մոլութեան միջնորդ կը գործածէին։

Պարսիկ սարվաղներն մի աղջիկ ևս բերին Ամատ գիւղից, սորա գեղեցկութիւնը չափազանց էր, խաներու մէջ մրձուամ մի ընկաւ այս աղջիկը իւրացնելու, իրենք զիրենք արբեցութեան տուին երկար օրեր։

Հայ օրիորդները խաներու լրբութեան ենթարկուած էին, որոց հետ սեղանակից կլինէին։

Յովասափ լրբութեան չափը անցած տեսնելով՝ այլ ևս չը ժուժեց, երկու նախկին օրիորդներու վերայ հաւատք ունենալով՝ նոցա խրատեց որ խոյս տան։

Օսկիատ (աղջիկներէն մին) երբ գիտցաւ որ Յովասափ հայ է, երեսի վրայ փռուելով նորա ոտքերն պինտ սեղմեց ու համբուրեց։ Յովասափ ուժեղ էր՝ «մեղայ Աստուծոյ» ասելով ոտներն ետ քաշեց, մի կանգուն ևս յետ ցաղգեց, սակայն աղջիկը նոյն վիճակի մէջ նորա ոտներից չէր բաժանուած։

—«Տէր Աստուած, էս ի՞նչ խաթի մէջ ընկանք, ասաց ու արտասուեց»։

Նա իր արտասուիլը երբէք չէր յիշէր, արտասուքը